ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«18» մարտի 2014 թվականի N 40 –Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԱԲՈՎՅԱՆ ՓՈՂՈՑ N 86/3 ՀԱՍՑԵԻ ՍՈՒՐԲ ՄԻՆԱՍ ԵԿԵՂԵՑԻՆ ԵՎ ԴՐԱ ԿԱՌՈՒՑՄԱՆ ՈՒ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՀԱՄԱՐ ԶԲԱՂԵՑՐԱԾ ՀՈՂԱՄԱՍԸ ՀԱՅԱՍՏԱՆՅԱՅՑ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ՍՈՒՐԲ ԵԿԵՂԵՑՈՒՆ (ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾԻՆ) ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու կողմից Գյումրի քաղաքի Աբովյան փողոց N 86/3 հասցեի առանց համապատասխան ձևակերպումների կառուցված Սուրբ Մինաս եկեղեցին որպես համայնքի սեփականություն ենթարկվել է պետական գրանցման (հիմք՝ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայական N 17022014-08-0033):

Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցու Շիրակի թեմի Առաջնորդ Միքայել եպիսկոպոս Աջապահյանը դիմել է կառույցը և նրա կառուցապատման ու սպասարկման համար զբաղեցրած հողամասը սեփականության իրավունքով Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցուն (Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին) անհատույց տրամադրելու խնդրանքով:

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 20-րդ կետով, Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 64-րդ հոդվածի 1-ին մասի 1.2-րդ կետով և Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի «Ինքնակամ կառույցների օրինականացման ու տնօրինման կարգը հաստատելու մասին» № 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 34.1 կետով՝ **համայնքի ավագանին որոշում է.**

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի սեփականություն հանդիսացող Աբովյան փողոց N 86/3 հասցեի 87,36 (ութսունյոթ ամբողջ երեսունվեց հարյուրերորդական) քառակուսի մետր արտաքին (77,31 (յոթանասունյոթ ամբողջ երեսունմեկ հարյուրերորդական) քառակուսի մետր ներքին) մակերեսով Սուրբ Մինաս եկեղեցին և դրա կառուցման ու սպասարկման համար զբաղեցրած 257,50 (երկու հարյուր հիսունյոթ ամբողջ հինգ տասնորդական) քառակուսի մետր մակերեսով համայնքային հողամասը սեփականության իրավունքով անհատույց տրամադրել Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցուն (Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին):
2. Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման հետ կապված ծախսերը կատարել Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու (Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին) միջոցների հաշվին:

Կողմ (15) **Դեմ (0)** **Ձեռնպահ(0)**

Ա. Ադամյան _____

Ա.Բաղրամյան _____